# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյան փող. 1, հեռ.(+374 11) 800 002 , www.minfin.am


## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը (ՕՉՄԿ/OIML) թղթակցային և Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին (ԿՉՄԲ/BIPM) ասոցացված անդամակցության նպատակով նամակ-հայտերի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին**

Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպությանը թղթակցային և Կշիռների և չափերի միջազգային բյուրոյին ասոցացված անդամակցության գործընթացի մեկնարկը նախատեսվում է 2025 թվականից, և անդամակցության առաջին տարվա անդամավճարի ամբողջական վճարումն իրականացվելու է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից, հետևաբար այդ կառույցներին անդամակցությունը չի հանգեցնի ՀՀ 2025թ. պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի հատկացման անհրաժեշտության:

Ինչ վերաբերում է հետագա տարիների (2026թ. սկսած) անդամավճարներին, ապա վերոնշյալ կառույցներին անդամակցությունը Հայաստանի Հանրապետության համար ենթադրում է ֆինանսական պարտավորություններ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման գծով (տարեկան անդամավճարների չափով):

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
3809820482
2025-04-22 14:45:33 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482


Կատարող՝ Գ. Կարապետյան
Հեռ. 011800351